«ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
FONDATION « CENTRE D'ENSEIGNEMENT PROFESSIONNEL FRANCO-ARMENIEN »

Հաստատված է
Հիմնադրամի տնօրեն՝ _____ Գ. Գրիգորյան
«_01_» _____09_____ 2026թ.

«ՖՐԱՆՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԷԿՈ-ԱԿՈՒՄԲԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) Էկո-ակումբը (այսուհետ՝ Ակումբ) ուսանողների և աշխատակիցների կամավոր միավորում է, որը գործում է սույն կանոնադրության, Հիմնադրամի ներքին իրավական ակտերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.2. Ակումբի գործունեությունը հիմնված է կամավորության, նախաձեռնողականության, համագործակցության, պատասխանատվության և բնապահպանական արժեքների վրա:

1.3. Ակումբն իր գործունեությունն իրականացնում է Հիմնադրամի տնօրենի կողմից հաստատված տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն:

2. Ակումբի նպատակները

2.1. Ակումբի հիմնական նպատակն է Կենտրոնում ձևավորել բնապահպանական մշակույթ և խթանել կայուն զարգացման սկզբունքների կիրառումը:

2.2. Ակումբի խնդիրներն են.

- բարձրացնել ուսանողների և աշխատակիցների բնապահպանական իրազեկվածությունը,
- նպաստել թափոնների տեսակավորման մշակույթի ձևավորմանը,
- խթանել ջրի, էլեկտրաէներգիայի և այլ ռեսուրսների խնայող օգտագործումը,
- կազմակերպել ծառատունկեր, մաքրման աշխատանքներ և այլ բնապահպանական ակցիաներ,
- իրականացնել վերամշակման և վերաօգտագործման նախաձեռնություններ,
- համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և միջազգային գործընկերների հետ,
- ներգրավել ուսանողներին կամավորական բնապահպանական ծրագրերում:

3. Ակումբի անդամակցությունը

3.1. Ակումբի անդամ կարող է դառնալ Հիմնադրամի յուրաքանչյուր ուսանող կամ աշխատակից, ով ընդունում է սույն կանոնադրության պահանջները:

3.2. Անդամակցությունն իրականացվում է կամավոր հիմունքներով:

3.3. Անդամակցությունը դադարեցվում է՝

- անձնական դիմումի հիման վրա,
- Հիմնադրամից դուրս գալու դեպքում,
- կանոնադրության պահանջների կոպիտ խախտման դեպքում:

4. Անդամների իրավունքներն ու պարտականությունները

4.1. Անդամ իրավունք ունի՝

- մասնակցել Ակումբի բոլոր միջոցառումներին,
- ներկայացնել առաջարկություններ,
- ընտրել և ընտրվել Ակումբի ղեկավար կազմ,
- ստանալ տեղեկատվություն Ակումբի գործունեության վերաբերյալ:

4.2. Անդամը պարտավոր է՝

- պահպանել կանոնադրության պահանջները,
- մասնակցել Ակումբի գործունեությանը,
- հոգատար վերաբերվել շրջակա միջավայրին,
- պահպանել Հիմնադրամի գույքը,
- նպաստել բնապահպանական նախաձեռնությունների իրականացմանը:

5. Ակումբի կառավարման մարմինները

Ակումբի կառավարման մարմիններն են՝

- Նախագահը,
- Փոխնախագահը,
- Քարտուղարը:

5.1. Նախագահ

Նախագահը՝

- ղեկավարում է Ակումբի գործունեությունը,
- հրավիրում և վարում է նիստերը,
- ներկայացնում է Ակումբը Հիմնադրամում և գործընկեր կազմակերպություններում,

5.2. Փոխնախագահ

Փոխնախագահը՝

- աջակցում է նախագահին,
- նախագահի բացակայության դեպքում կատարում է նրա լիազորությունները:

5.3. Քարտուղար

Քարտուղարը՝

- վարում է նիստերի արձանագրությունները,
- իրականացնում է փաստաթղթաշրջանառությունը,
- ապահովում է անդամների իրազեկումը:

Էկո-ակումբի գործունեությունը համակարգում է Հիմնադրամի տնօրենի հրամանով նշանակված անձը:

6. Ակումբի գործունեության հիմնական ուղղությունները

Ակումբը կազմակերպում է՝

- էկոդասընթացներ,
- սեմինարներ,
- ծառատունկեր,
- մաքրման ակցիաներ,